

Բերդաձորն ընկավ: Թշնամուն մնացին Մեծ Շենք, Հին Շենք, Եղծանողը և Մաղկաձորը: Մրտի մարմնքով մտածում ես, որ Գետաշենի օրինակից չկարողացանք դաս քաղել:

Բերդաձորում մարդիկ հնազանդվեցին... Պաշտպանական մարտերին մասնակցած մի քանի տեղացի երիտասարդները առավ խոստովանում են մեր խոցելի կողմերը:

Խոսում են դառնացած տղաները

Մարգիս Հայրապետյան. - Եղել եմ Հին շենում: Բռնազաղթին վերջինը ես եմ դուրս եկել գյուղից: Դուրս եմ եկել գլխահակ, մոն-մոնակ: Տեսնեիք ինչպես սկսվեց քալանը, երբ օձոնականները մտան գյուղ: Այդ պահին ես քաքնվել էի անտառում: Հետո իմացա, որ ծեծել, տանջել են մարդկանց, Շուշիի բերդ տարել համարձակ ջանքերին: Չգիտեմ ու՞մ խելքին փչեց, որ գորքը գալիս է. չպիտի դիմադրեմք: Ավելի լավ չէ՞ր կավեիք, պատվով մեռնեիք (գուցե եւ Մարգիսի այս խոսակցությունը արժանահավատ չլիներ, եթե այդ մասին չվկայեին Տեղ գյուղ գաղթած այլ բերդաձորցիներ): Վախենում էին տանկերից: Այնինչ կարելի էր պաշտպանվել, մասնավոր որ գյուղի դիրքը թեք է, եւ տանկերը դանդաղ էին շարժվում: Մեզ ավելի՞ շատ նեղացնում էին ուղղաթիւների կրակոցները: Մինչեւ այդ բնակիչներին կարելի էր տանել անտառ, այնտեղ ապահով էր: Բայց տղաները չլսեցին ինձ:

Երվանդ Եղյան. - Ինձ սփոփում է մի միտք. օձոնականներն առանց զինվորների դժվար թե դիմեն համարձակ քայլերի: Դրանք ավելի շատ հետեւում էին զինվորներին, քալանում տները:

Նվեր Բոսյան. - Կավո՞ղ չեն, քայց նենգ ու խորամանկ են: Նույնիսկ կարողանում են կաշառել եւ իրենց կողմը գրավել զինվորներին: Ստեփանակերտից մեզ մոտ էր եկել մի երիտասարդ՝ հետը բերելով օձո-

նականի շորերով մի բելոռուս զինվորի: Սակայն հետո ի՞նչ ստացվեց. նույն զինվորը գաղտագողի փախել էր օձոնականների մոտ եւ հայտնել մեր զենքի տեղը:

Գյուղ մտնելուց հետո անմիջապես բռնագրավել են զենքը:

Հայկ Անտոնյան. - Գետաշենի իրադարձությունները ցույց տվեցին, որ բանակը քացեիքաց աղբրեջանական օձոնականների



հետ միասին ծրագրել էր բռնությամբ տեղահանել ողջ հայ բնակչությանը եւ դրանով մեկընդմիջտ վերջ դնել արցախյան հարցին: Այդ ընթացքում թե՛ զինվորները, թե՛ օձոնականները խտրություն չեին դնում հնարավորությունների մեջ: Այն էլ ասեմ, որ մեզ ոչ ոք ցույց չտվեց օգնություն՝ կանխելու արյունահեղությունը: Այս ամսինց հետո, ի՞նչ է, պիտի ձեռքներս վեր պարզեիք եւ ասեիք՝ եկեք մեզ կոտորե՞ք: Գոնե օգտագործեիք եղած հնարավորությունները: Ինձ թվում է, որ ինքնապաշտպանության նախապատրաստվելիս մեզ պետք է գոնե տրվեին զինվորական առանձին հրահանգներ: Ծավոք, այս պարագան մատնվել էր բախտի քմահաճույթին:

Մամվել Գրիգորյան. - Այո, Գետաշենի իրադարձություններից հետո ավելորդ էր հույս դնել կենտրոնի ողորմածության վրա: Ավելին. պետք է սերտ կապ ստեղծեիք Արցախի կարեւորագույն բնակավայրերի միջեւ, ինքնապաշտպանության ժամանակ սատարելու միմյանց: Այս նպատակով եւ՛ Հայաստանում, եւ՛ Արցախում ոչինչ չի կատարվել համապատասխան մարմինների

կողմից: Հասկանում եմ, հենց Արցախում էլ շրջափակվում էին շրջաններն ու բնակավայրերը: Սակայն մյուս կողմից չպետք է մոռանալ, որ գործ ունենք ագրեսիայի հետ: Հակառակ կողմում էին զինվորները եւ օձոնականները, սրանք հոգեբանորեն պատրաստ են տանկերի թրթուրների տակ ճզմելու մեզ, սպանելու, բռնաբարելու, քալանելու: Ուրեմն ինչ. ատամն ընդ ատամ...

Խոսեցին նաեւ մյուս տղաները: Խոսեցին բորբոքված եւ վիրավորված: Նրանք զինվորականներ չեն ու քաղաքագետներ: Արտադրության աշխատողներ են, հողի մշակներ, մտավորականներ: Պարզապես իրենց խղճի ծայնին հավատարիմ՝ ոտքի են կանգնել պաշտպանելու հայրենակիցներին: Նրանք մեր խիղճն են, մեր միտքը, մեր արժանապատվությունը: Ուրեմն պարտավոր ենք ներանց ասածից ճիշտ հետեւություն անելու: Զրույցի առարկան Բերդաձորն է՝ Արցախի դարպասներից ամենակարեւորը: Բերդաձորի կորուստը կործանարար շղթայական ճեակցիայի սկիզբ կարող է լինել:

Երեկ, երբ կանգուն էր Բերդաձորը, Հայաստանն Արցախից հեռու էր ընդամենը վեց կիլոմետր, այժմ այդ հեռավորությունը դարձավ 70 կիլոմետր...

Իզուր, բոլորովին իզուր չէին գայրացած ու դառնացած մի բուռ երիտասարդները: